

## ԹՈՒՂԹ ՄԱԿԱՐԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻՈՑ

### ԱՌ Ս. ՎՐԹԱՆԷՍ

Մեր հին կանոնագրքերէն ումանք և լոյս տեսած Գիրք բղրսցի (407) ունին նամակ մը յանուն Մակար Ա հայրապետին, որ ուշադրութիւնս գրաւած է միշտ, պատեականելով Հայ եկեղեցւոյ կարեւոր մէկ շրջանին: Անոր բնագիրը գոյութիւն չունի այսօր, և Մայի հրատարակեց հայերէնէ թարգմանութիւնը: Չամչեան շտարակուսեցաւ անոր վաւերականութեան մասին<sup>1</sup>, և ոչ ալ Օրմանեան<sup>2</sup>: Չեմ յիշեր՝ որ մեր նորագոյն բանասէրը զբաղած լինին անոր քննութեամբ: Գիտեմ միայն՝ որ Հ. Ն. Ալիքեան զայն վերագրեց նոյն քաղաքի համանուն հայրապետին՝ Բ Մակարայ (ամ 565-572), և թղթակցը՝ համարեցաւ ժամանակակից Սիւնեաց Վրթանէս եպիսկոպոսը, «վերապահելով ուրիշ առթի մանր քննութիւնը»<sup>3</sup>: Ինձ կը վիճակի ուրեմն կատարել հոս այդ քննութիւնը, յորում պիտի ճշդեմ նախ թղթին ժամանակը. յետոյ անոր գրութեան հանգամանքները, և հուսկ՝ բովանդակութիւնը:

Ա. — Կարողաւ զայդ ուշի ուշով, համոզուեցա՞ր՝ որ Դ դարուն միայն կրնայ գրուած լինել. և ահա փաստերս:

Վերնագիրը, «երանելոյն Մակարայ՝ սրբոյ քաղաքին Երուսաղեմի հայրապետի», որ համաձայն է բնագրին մէջ յիշուածին՝ «էս Մակարիոս արքեպիսկոպոս սուրբ քաղաքիս Երուսաղեմի» (410), կը յարմարի երկու համանուն եպիսկոպոսաց ևս. որով անտեղութիւն չկայ առաջինը համարելու զայն՝ քան երկրորդը:

Գրիչը կը խօսի «առ քրիստոսասէր և երկրւոյս եպիսկոպոսապետ տէր Վրթանէս, և առ համօրէն եպիսկոպոսս և քահանայս Հայոց» (408): Արդ՝ ոչ Սիւնեաց առաջնորդը կրնար «եպիսկոպոսապետ»

կոչուիլ, և ոչ ալ Մակար կարող էր խօսիլ ամբողջ հայ կղերին՝ սոսկական եպիսկոպոսի մը բերանով, փոխանակ Հայոց կաթողիկոսին՝ որ կը հրամայէր եպիսկոպոսաց, և ինք միայն կրնար լսեցնել իւր ձայնը:

Այս թղթիս մէջ կ'ականարկուի Տուրք եպիսկոպոսին՝ որ կը հովուէ Բասէն ու Բագրեանդ գաւառները միանգամայն (412), ուր ընդ հակառակն Բ Մակարայ օրերուն, այսինքն անոր նստելէն տասը տարի յառաջ՝ 555ի ժողովին մէջ՝ նոյն գաւառներն արդէն ունին զատ առաջնորդներ, Գրիգոր ու Տիրակ, և անշատ կը մնան նաև յետ Մակարայ՝ 606-607 թուին<sup>4</sup>:

Յիշեալ Տուրքի մասին կ'ըսէ Մակար՝ թէ «սակաւուք ընդ արիանոսս միաւորեալ է, և զարծեալ խղճեալ» (412): Այդ կցորդութիւնն արիանոսաց հետ՝ կը յարմարի Դ դարուն, մինչ վեցերորդին Հայք գործ ունէին նեստորականաց հետ, և արիանոսք վաղուց լռեթ էին: Նոյն ինքն Մակար արիանոսներէն միայն կը զգուշացնէ զՀայս (411), ապացոյց՝ թէ՛ նեստոր ու Եւտիքէս չկային տակաւին: Նմանապէս կ'ակնարկէ «սրբոյ ժողովոյն որ վասն հերձուածոցն եղև» (408). միակ ժողովը զոր գիտէ, որ նիկեականն էր, և յաջորդները դեռ չէին կատարուած. ապա թէ ոչ իւր ականարկածը զատելու էր միւսերէն անուամբ:

Կրնանք ուրեմն առանց վարանման հետեցնել՝ թէ թղթիս հեղինակն էր Մակար Ա, և կը գրէր Դ դարուն՝ առ մերս ս. Վրթանէս կաթողիկոս, որդի Լուսաւորչին:

Բ. — Հայ եկեղեցին այս շրջանիս կը գտնուի Կապադովկիոյ աթոռին գերիշխանութեան ներքեւ, սկսելով ս. Գրիգորի

1. Չամչ. Պատմ. Ա, 422. — 2. Ազգայ. 131. — 3. Հանգ. տաճ. 1908, 471, (55թ.). — 4. Ըստ Կա-

նոնագրաց, ուր թղթոց զիրեն եպիսկոպոսաց կ'ըսէ վրեպակաւ. — 5. Գրիք բղրսցի 73, 146, 151.

օրերէն, ինչպէս երկար փաստերով ցուցած էմ ալլուր՝ Այս հանգամանքին կ'ակնարկէր և Մակար, ըսելով՝ թէ աստուածային սէրն գոչ միայն ի սերձառութեամբ (ինչպէս էր կենսաբան) յօժարեցուցանէ ժողով խնդրել գհոգեոր օգտութիւնն, այլ և ի տար աշխարհ (յերուսաղէմ) փութացուցանէ հասանել մեծաւ փափագանօք » (407)։ Այս խօսքը շնչմարեց Օրմանեան, թղթակցութենէն հետեւցնելու համար՝ թէ « Հայերը կեանսարիտ աթոռին հետ հպատակութեան կանոնական կապ մը չունէին, և իբր ազատ աթոռ ուրտեղէն որ յարմարագոյն կը սեպէին, պէտք եղած տեղեկութիւնները (ինչո՞ւ ոչ հրաւհանգները) կը քաղէին »։ Եթէ այդ հայցուածին համար գոչ ոք պիտի կարենայ ըսել թէ Հայաստան իրուսաղէմի պատուրիարքութեան ներքեւ էր » (անդ), մի և նոյն պատճառաբանութեամբ՝ այդ առթիւ կենսաբան չդիմելուն համար ալ ոչ ոք պիտի կարենայ ըսել թէ կապաղովկոյ ներքեւ չէր։ Եկեղեցական միութեան շրջանին սովորական էր ըրիստոնեայ եկեղեցեաց մէջ՝ անկախ հպատակութեան խնդրէն՝ հաւատոյ կամ բարեկարգութեան վերաբերեալ հարցերու մէջ իրարմէ խորհուրդ ընդունիլ կամ խնդրել։ մասնաւոր առաքելական աթոռներէն, որոց ըով Յիսուսի աշակերտաց հիմնած աւանդութիւնը աւելի անարատ պահուած կը համարուէին։ Եթանօթ են Դիոնիսիոս աղեքսանդրացոյ թղթերը զանազան եկեղեցեաց ու Հայոցն։ նոյնպէս ս. Իգնատիոսի և ալլոց զբաւնեւրը։

Ժամանակի նշանատր դէմքերէն էր Մակար Ա (ամ 312-383), արիանոսաց հօգազոյն թշնամիներէն, մասնակից Նիկիոյ ժողովոյն, և ս. Աթանասէ դասուած հաւատոյ երեւելի վարդապետաց մէջ։ Ուստի հրապարիչ նաև Հայոց, որոնք իրեն յղած էին գիր «ի հեռաբնակ աշխարհէ... որ ի ձեռն երկրիւղած քահանայից (Հայ պատուի-

րակաց) մատուցաւ, կ'ըսէ, առաջի բազմութեան եպիսկոպոսացս, որք ի մի ժողովեալ յիւրաքանչիւր քաղաքաց, որոց առաջի անկեալ հոգեոր մաղթանօք՝ խնդրեցին զգրոյն պատասխանիս », և որոց կողմանէ իսկ շարագրած է Մակար իւր թուղթը։

Հայրապետ կը յիշեցնէ նախ թէ « զամենայն կանոնադրութիւնս սրբոյ ժողովոյն՝ որ վասն հերձուածողացն եղև, (Նիկեականը կ'իմանայ, ինչպէս ըսինք), զորս կարեւոր է ընդունել ամենայն բարեպաշտաց, որ եղև վասն դրութեան կարգաց եկեղեցւոյ »։ Արդարև Նիկիոյ ժողովը վարդապետականէն զատ՝ բարեկարգական կանոններ ալ սահմանեց, որոնք թէպէտ հասած էին մեր աշխարհը, բայց կ'երևի թէ նորագործ Հայաստանի կրօնական խառնակ վիճակին մէջ լաւ արմատ չէին բռնած։ Հայ պատուիրակները « խիացեալ զարմացան », կ'ըսէ, տեսնելով ս. քաղաքին մէջ տիրող բարեկարգութիւնը, ուսկից հողովանք արեւելից (Հայք ու դրացիք) թերի են զգուշութեամբ յայսպիսի բազում ինչ իօրօք։ Այդ թերութիւնը, զորս լսած էր պատուիրակներէն, կ'ամփոփէ այսպէս. « Ի տեղիս տեղիս աւազան կարգաւոր ոչ ունին, և յորպէս ամանի միջը տեն։ Եւ է որ սարկաւազունք մկրտութիւնս առնեն։ Եւ եպիսկոպոսք և քահանայք առանձնակ ձէթ օծման օրհնեն, և զձէթ կնքոյ (մկրտութեան) որ յառաքելոցն և այլս պահի, յաւելուածով ոչ ունին, (հինն խառնելով նորին մէջ յաջորդաբար), և զորոք զգայարանս մանկան ոչ օծանեն։ Եւ է զի զժողովոյն (Նիկիոյ) կարգեալսն ոչ առնեն ուրեք ուրեք քահանայքն ի ժամ մկրտութեանն։ Եւ ձեռնադրութեամբ ժառանգաւորքն միապատիւ հաւատարին, և ոչ ընդ աւելեօքն (երիցագունից ներքև) հնազանդին։ Եւ բազում և այլ շփոթութիւնք հպարտութեամբ և ծուլութեամբ, զոր ի կարգս եկեղեցւոյ մուծեալ են մար-

1. Կարեւոր խնդիրներ հայ. եպ. պատմութենէն, 182-220. — 2. Աղգապ. 132. — 3. Կարեւոր խնդիրներ՝

115. — 4. Ագաթանգ. 657.

մնասէրք, զոր ծանուցին մեզ եկեալքս» (408):

Նիկիոյ ժողովին որոշումներ ամբողջովին չեն հասած մեզ, և ծանօթ են քսան կա- նոններ միայն՝ իբրև վաւերական, թէպէտ եւս ուրիշներու երբեմն գոյութիւնն ալ վկայուած է՝ Այս պատճառաւ Մա- կարայ ակնարկած կարգաւորութիւնը չեն գտնուիր միշտ անոր զործոց մէջ. ոչ ալ ժողովը զբաղեր է անոր բոլոր ըսածներով. այլ սովորաբար աւանդութենէ կը խօսի Երուսաղեմի հայրապետը, ինչպէս ինքն իսկ կը զգացնէ. և իբր նիկեական սահ- ման՝ մկրտութեան մասին ըսածն է իսկա- պէս։ Արդարեւ նոյն ժողովին ք կանոնի մէջ կը կարդանք. «Մի՛ որ ի դարձելոցն ի հեթանոսութենէ վաղվաղակի մկրտեա- ցի»։ և Մակար նոյնը կը կրկնէ, զգու- շացնելով մատակարարել նոյն խորհուրդը «թերակատար ինչ կարգօք»։ այլ նախ «խրատել և ուսուցանել բանիւ վարդա- պետութեամբ, մերժել ի սատանայէ, և (ապա) ընծայեցուցանել Աստուծոյ՝ սրբոյ աւագանին լուսաւորութեամբ» (409):

Գ. — Մակարայ հրահանգն ինն զլիոց բաժնուած է։ Բնագրին մէջ չկայ ակնար- կութիւն այդ թուոյն, այլ վերնագրին, գուցէ շարադրուած Օձնեցի հայրապետէն, որ եկեղեցական կանոնաց հաւաքածոյ մ'ըրաւ, նշանակելով համառօտիւ իւրա- քանչիւրին «զժամանակն և զպատճառն... և զգլուխս», ինչպէս ինք կը վկայէ<sup>1</sup>։ Որով կրնանք հաւատալ նամակին ամբողջ հաս- նելուն, զոր կ'արգարացնէ բովանդակու- թեան հնութիւնն ալ, զոր պիտի տեսնենք։ Այդ զլիոց նիւթ են հետեւեալ հարցերը։

1. — «Եթէ՛ արժան իցէ սարկաւազաց մկրտութիւն առնել, և կատարեալ իցէ խորհուրդն»։ Կը պնդէ՝ թէ՛ եպիսկոպոսաց ու քահանայից պաշտօնն է այդ։ Եւ եթէ տեղական սովորութեամբ սարկաւազէ մկրտեալներ կան, անմեղ են (409)։ Ա-

ռաքելոց օրերէն սարկաւազներն ալ կը մկրտէին, ինչպէս Փիլիպպոս քանի մ'ան- զամներ<sup>2</sup>։ Բայց որովհետեւ սարկաւազաց բուն զործն էր սպասաւորութիւնը, մկրդ- տելու իրաւունքը հետ զհետէ առնուեցաւ անոցմէ։ Ըստ Տիւրտուղիանոսի<sup>3</sup> և Առաքե- լոց սահմանադրութեանց<sup>4</sup> կրնային մկրդ- տել երբ քահանայ չկար։ Կ'երևի թէ մե- ռոց ազատութիւնն աւելի ընդարձակ էր, զոր երուսաղեմացին կը պահանջէ սանձել։

2. — «Եթէ՛ աւագան սրբեալ ոչ ունին և յանպէտ ամանի մկրտեն»։ Մակար կը խրատէ՝ որ եկեղեցւոյ քով մկրտարան և աւագան չինուի և հոն մկրտուին, քաց ի հուանդութեան պարագայէն, ուր ներքի էր մկրտել ամենուրեք (409)։ Փրիստոնէից սովորական էր ի սկզբան կնքուիլ գետե- ռու, լճերու և ծովերու մէջ՝ նմանութեամբ Յիսուսի և բազմութեամբ։ Յետ խաղա- դութեան եկեղեցւոյ հնարուեցան աւա- զանք<sup>5</sup>։ Լուսաւորիչ նոյնպէս Եփրատի մէջ մկրտեց Հայերը համախումբ<sup>6</sup>, և Վարդա- նանց բանակին մէջ գտնուած երախայր կնիք ստացան յանկարծահնար աւագանի մէջ<sup>7</sup>։ Այդ կերպով Հայք վարժեր էին անտարբերութեամբ նայիլ սրբեալ աւա- զանին վրայ, ինչ որ կը տեսնէր ու կը մեղադրէր տակաւին Յոհան խմաստաւէրն ալ ը դարուն<sup>8</sup>։

Երուսաղեմի հայրապետը միանգամայն կը յորդորէ մկրտութիւնը չչետածգել «ի գլխաւոր տօնս միայն»։ Նախկին դարե- րուն՝ երբ ստիպողական չէր մանկանց մկրտութիւնը, զայն կապած էին Աստուա- ծայայտնութեան, Զատիկի և Հոգեգալտեան շարաթուոց հետ<sup>9</sup>։ Եոյնպէս կը մնար և մեր քով. տեսանք վարդանանց մէջ դեռ երա- խայ գիւղուորներ, մինչ ը դարուն սովո- րական էր արդէն ութօրեայ մկրտել<sup>10</sup>։ Մա- կար կը յիշեցնէ նաև խորհրդոյս արարո- ղական մասունքը. երբիցս ընկզմումն ի ջուր. և ապա զրոշմի տուչութիւնը՝ «ձեռս

1. Հմմտ. Յովնանեան՝ Պատմ. տիեզ. ժող. 53. — 2. Չմբ. Բ, 395. — 3. Գրք. առ. Բ, 12, 13, 34. — 4. Յոգ. մկրտ. Ժէ. — 5. Բ, Էւ. — 6. Cabrol, Dict. II,

383, 390. — 7. Աղաթ. 620. — 8. Երեւէ Ե. — 9. Ոձ- նեցի՝ 5. — 10. Cabrol, II, 391. — 11. Ոձնեցի՝ 6.

ի վերայ դնելով» և օծմամբ իւրոյ, «որպէս ուսաց ի հարցն հոգևորացն» յաշաւ կերտացն առաքելոցն սրբոց» (409-10):

3. — «Եւ զիմորդ կարգք եկեղեցւոյ սրբոյ յօրինին» և իր յանձնարարէ «վերատեսչաց» կամ եպիսկոպոսաց՝ խոնարհութիւնը, և չփրցանալ ամբարտաւանութեամբ ստորակարգելոց վրայ (410):

4. — «Եւ զիմորդ հրամայիցի բաւականաւ իւրաքանչիւր յեղեալն կարգի»: Կ'ըսէ՝ թէ «զսուրբ մկրտութեանն ձեռնադրութիւնն», որ է դրոշմը, եպիսկոպոսունը ու քահանայը կատարեն, և սուրբ իւղը կամ մետոնն «եպիսկոպոսական օրհնեսցէ»: Իսկ ասոր հեռաւորութեան պատճառաւ կամ ի ստիպել հարկին՝ աւնոր հրամանաւ երկու կամ երեք եպիսկոպոսներ միարանած օրհնեն: Այլ մեռելոց, հիւանդաց ու մկրտելոց օծման «զիւղն» (այսպէս եզակի՝) քահանայն ու եպիսկոպոսն առանձնաբար օրհնեն ըստ պիտոյից ժամուն. և թէ «զայս սահմանեցին սուրբ հարքն մեր» (410), Յայտնի է մեր պատմութեան մէջ՝ որ մետոնի օրհնութիւնը սեպական մնաց միշտ մեր կաթողիկոսին. ուր Դոնի 719ի ժողովը՝ երախայից կամ մկրտելոց և հիւանդաց զոյգ իւղերը քահանային օրհնել կու տայ «ըստ բաւականի ժամուն պիտոյից»։ սովորութիւն կամ սահման՝ յորում զգալի է Մակարայ թղթին ազդեցութիւնը:

5. — Կը հրամայէ՝ որ «մի՛ ոք երկմտութեամբ և մի՛ թերահաւատութեամբ և մի՛ գործովը անարժանութեամբ մերձ լինել յանդգնեցի» պատարագի խորհրդոյն (411):

6. — Նոյնպէս պատարագչին ալ կը պատուիրէ՝ «երկիւրիւ և զգուշութեամբ կատարել» զայն, և արիստեանները հեռի պահել անոր մատուցման պահուն (411):

7. — «Եւ որպիսի՝ օրինակաւ նուէր սրբութեանն յօրինեսցի: Հանեալ ի սեղան զհացն սուրբ ջերմ ըստ առաքելոցն աւանդութեան, և (քաժակ) անապական առանց իրից խառնման. զի ոչ անապականացու իւրիք փրկիմք, այլ անապական մարմնով (և աւ-

րեամբ) ամրիժ և անարատ զառինն. և զայս մինչ ի սեղանն սարկաւագունք յօրինեսցեն, և զկատարելն ի վերայ՝ քահանայն կատարեսցեն» (411): Երկու փակագծերն ես կը ղնեմ, զատելու համար բաժակի խնդիրը՝ որ եկամուտ է, և կը պակսի Ս. Ղազարու է հին բողոքգիր և թի նոտրգիր կանոնագրաց մէջ: Երուսաղեմացի հայրապետ մը, որ ինք տիեզերական սովորութեամբ, — որ Երուսաղեմէն իսկ էր, և ուսկից շեղումը սկսաւ Զ դարուն՝ եւտիքահանէ մը՝, — ջրախառն բաժակով կը պատարագէր անկասկած, չէր կարող Հայոց յանձնարարել անապակը, ինչպէս ուղեց կարծեցնել միասիտ հայ խաղախողը: Արդէն Մակար փակագծերէն յառաջ ու վերջ կը խօսի լոկ հացի մասին ու եզակի. «նուէր (ոչ նուէր) սրբութեան», զոր կը քացարէ «հացով», և «զայս (ոչ զայսոսիկ) սարկաւագունք յօրինեսցեն», կ'ըսէ. և անապականը՝ կրկնած՝ հացին կու տայ, իմանալով բազար՝ առանց աղի ու խմորի, — որ Ե դարուն պիտի սկսէր աւրելեկաց քով, — և ոչ գինւոյն՝ որ անապակ մակրորը կը պահանջէ: Յայտնի է ուրեմն թիքոց գրոց խանգարչին ձախաւեր ձեռքը նաև այս կիտիւ մէջ:

Ջերմ կամ դալար հացի սովորութիւն ընդհանուր էր, և նմանութիւն հրէական «զառաջաւորաց հացին»։ Առաքելական կանոնը կը յիշեն զայն (յր)։ Նոյնը կը գտնենք նաև մեր քով. յանուն թաղէտ առաքելոյն կանոնաց մէջ կ'ըսուի. «Զհաց պատարագին՝ յորում աւուր զպատարագն մատուցանեն՝ ի նմին աւուր եփեսցեն» (գ)։ Սովորոյթս ԺԲ զարուն դեռ կը տեւէր. այնպէս որ Լամբրոնացիին կը քանգատէր անոր դէմ, պատճառաւ «վրդովմանց» համար. և վրիպակաւ կը կարծէր զայն «եւ կամուտ, և ոչ ի հարցն առ մեզ ժամանեալ»։ Տօնացոյցներն ալ, սկսեալ հնագունէն (1438ին՝ ի Ս. Ղազար) որ ծանօթ են ինձ, ծննդեան ճրագաւուցին և

1. Օճեցի՝ 8, 26. — 2. Կարեւ. Խնդիր. 582. — 3. Ա. Թագ. ԻԱ, 6. — 4. ՄԿԳ. պարգ. 190.

աւագ հինգշաբթի կը գրեն՝ թէ «նշխար գործի»:

Պալով գործողին, անշուշտ մեր քով ևս սարկաւազաց յատուկ էր, ինչպէս Լամբրոնացին կը գրէ<sup>1</sup>: Սակայն որովհետեւ բոլոր եկեղեցիք սարկաւազ ունեցած չեն միշտ, և անոր պաշտօնը քահանայք կը կատարէին, Պարտաւայ կամ Սիոնի ժողովոյն (768ին) կանոնները կը սահմանեն. «Քահանայք մի՛ իշխեսցեն զնշխարս կենաց հացին մանկանց կամ զինուորաց տալ առնել, այլ ինքեանք արասցեն» (ԺԲ): Ընդհանրապէս չափազանցօրէն կը պահանջէ՝ որ նոյն ինքն պատարագիչը պատրաստէր, և ոչ թէ միւս քահանայից շինածը գործածէր<sup>2</sup>:

8. — Մակար կը յանձնարարէ՝ որ սուրբ տեղանք վարագործով ծածկուի. մկրտաւորուն անոր ետեւ դրուի՝ աջ կողմէն, ժառանգաւորը սպասաւորեն ըստ իւրաքանչիւր աստիճանի. ժողովուրդը վարագործէն դուրս մնայ, և երախայք դրան քով (411):

9. — Կը հաստատէ՝ իբր պատուիրան՝ իւր բոլոր ըսածները, «ըստ ինդրոյ աղաչանաց ձերոց», և կը նշովէ անոցմէ խոտորողները: Ասոնց մէջ էր վերոյիշեալ Տուրգ եպիսկոպոսը, զոր փառաւով կը կոչէ: Յայտնի է՝ որ մեր պատուիրականները զանգատներ էին անոր դէմ, որ թիչ մը ժամանակ արխանտապ հետ միաբաններ էր, յետոյ զղջացեր, և «արդ այլ ևս յանդգնագոյնս խորհի»: Ինք սոսկ եպիսկոպոս, մեր արքեպիսկոպոսին հաւատար պատիւ կու տար իւր անձին, ինչ որ Երուսաղեմի հայրապետն անվայելուչ կը գտնէ. և կը յանձնարարէ «զայնպիսին քաղցրութեամբ ի հնազանդութիւն կոչել. և եթէ ի նոյն մնացէ, խորշիկ իբրեւ յօտարէ » (412):

Հոս է աւարտի «ողջունիւ» Մակարիոսի թուղթը, որ այսպէս մեր առջև կը դնէ Դ զարուն, մեր հեթանոսութենէ ի բրիտանոնութիւն անցման թերակազմ շրջանին մէջ տիրող անկանոնութիւնը. և որոց հետագայ սրբազրութեան մէջ յայտնապէս

ազդեցիկ դեր մ'ունեցեր է սուրբ քաղաքին նշանաւոր հայրապետին այդ թուղթը: Այս պատճառաւ ալ մեր եկեղեցական կառնոնաց կարգն է մտեր, և ամենակարեւոր յիշատակարան մը պիտի մնայ հայ եկեղեցւոյ տարեգրութեանց մէջ:

Հ. Վ. ՀԱՅՏԻՆԻ

#### ՈՒՆԵՐՈՒ ԵՐԳԸ ԶՈՒՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Մարդկային հոգին

Նըման է ջուրին.

Նըկընքէն կ'իջնէ

Եւ միշտ դէպ ի վար

Երկր կը դիմէ

Շարունակաբար:

Երբոր քարծր ու սեպ

Ժայռերու կողքէն

Ճառագայթն ամբիժ հոսի, այն ատեն

Նըրգաշնակօրէն

Ամպի կոհակաց մէջ նա կը փըշրի՝

Լըպիւծ ժայռին վրայ:

Եւ ապա հեշտի հիւրընկալուելով,

Քող մ'աւաժո՞ղէ մօրին կ'իջնէ դէպ անդունդ

Մեղմիւ մուշնելով:

Ու յար բախելով

Ջուրէն վեր ցըցուն սեպ սեպ ժայռերուն

Տժգն կը փրփրի,

Աստիճանաբար

Միշտ խոր մըխուելով:

Հարթ անկողնին մէջ

Դէպ ի դաշտն, հովիտն նա կը սողոսկի.

Եւ պարզ լըճին վրայ

Աստղերը բոլոր կը ցոլացընեն

Իր դէմքը պայծառ:

Հոգին է տոփաւորն

Աղուոր՝ կոհակաց...

Հոգին ամբողջապէս

Փրփուր ալիքներն կը խառնըշտկէ...

\* \*

Մարդու հոգի,

Ո՛րքան ջուրին կը նըմանիս.

Իսկ դուն, մարդու ճակատագիր,

Ո՛րքան հովին կը նըմանիս:

Բնոր. Բրգ. ՅԱՍՈՐ-ԳՐԻԳՐ

ԳԷՕԹԷ

1. ՄԿԵ. պորգ. Կ4. — 2. Թուրք, ՎճՆԿ. 148.